ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միւրիկան հաստր տարեկան 4 ոսկւոր թղթգրմ.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարի. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն լինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վերամնեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւններ ալ կընդունուին, առանց սահ յաւելման բաժնեգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Բ ՏԱՐԻ ԹԻՒ 24

1886 ՆՈՅԵՄԲԵՐ 10

(ՀՈԿՏ. 29 Հ. Տ.)

ՋՈՐՆ-ԱՃԱՒՔՈՒ

Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱԿԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է դրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ՐՈՍՔԱՆՊԱՏՈՒԹԻՒՆ

Ազդ.—Արմենիա եւ Ցուցա-Լատին Դաշնակցութիւնը.—Նամակ Խուսիաէն (Տփղիս).—«Հայաստանի Զաւակների Միութիւն»ը.—Հայեր ի Փիւրքիա.—Մահագոյժ.—Արուսեան-մանի յուրեր.—Առեւտրական.—Ծանուցումներ։

Ա. Զ Դ

—

Կը յիշեցունենք մեր բաժնորդներին որ «Արմենիա»ի բաժնորդագրութեան պայմանն է կանխիկ վճարել և այժմ Բ տարեշրջանի Դրդ. ամիսն ենք մտած արդէն։ Ուստի կը խնդրենք որ նոքա որոնք դեռ չեն վճարած իրենց բաժնորդագինն, բարեհաճին անյապաղ հատուցանել մեզ դրամ։

Ա. Ր Մ Է Ն Ի Ա.

ԵՒ ՑՈՒՆԱ—ԼԱՏԻՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

(Թարգմ. փարիզի Etendard լրագրէն)

Միջերկրական ծովեզերեայ ժողովուրդներին մէջ որոնք պէտք է մանաւանդ Ցունա-Լատինական Մեծ Դաշնակցութեան, կայ Ասիան մէջ եւրոպական առեւտրական յարմարութիւններին վրայ մի ժողովուրդ որ պէտք չէ դատա Թագաւոր Հայ ժողովուրդն է այդ որ ԺԱ. դարէն սկսեալ չարունակ մատնակոյած է Լատինական Դաշնակցութեան և նոյն իսկ այդ սրբազան դաւի համար կռուելով չնաւած է քաղաքական քարտէզի վրայէն իբր մի անկախ Թագաւորութիւն

Այսօր դժբախտ բնաւ չեն յիշեր այլ եւս Ասիանաբի մէջ այն մեծ ծառայութիւնները զոր ամբողջ մարդկութեան և քաղաքակրթութեան մատուցած է մեր Կիլիկեան փոքրիկ Թագաւորութիւնը զոր Սելճուկեանների երկաթէ դատաղանին տակ ընկճուած Մեծ-Հայաստանէն փախստականները գնացած հաստատած էին Տարսոն լարին կիրճերին մէջ, Յայնների ձեռքէն առնելով այդ տեղերը Բայց երբէ Լատիններ մուտցած են այն եղերայրական յարաբերութիւններ որ դիրենք կը միացնէին Հայերին հետ Միջին դարին մէջ, Հայեր դեռ չեն դադրած իրենց աչք դարձնելէ դէպի անոնք և վատահութեամբ կը յուսան թէ իրենց վրկութիւն նոցա միջամտութեամբ պիտի լինի։ Տարսոնի քիչ ժամանակ յառաջ, անցած մայիսի 16ին, ինչպէս նաև Վիքթոր Հիւկոյի մահին ժամանակ, այդ նպատակով մի մեծ ցոյց արին Հայերն ի Սէն-Տրնի, Արմենիաի վերջին Թագաւորի գերեզմանին վրայ, Լևոն Զի որ Լատինականների ֆրանսական գերեզմանին կը պատկանէր։

Գրկաբաց ընդունած ենք մեր երկրի կօտէֆրուա որ Պուլյոնները, Գոտուէն որ Ֆլանդրները, Թան որ Գրիէններ, Սէն Լուիները և այլն, որոց հետ միասեղ դանուած ենք կռուի ամեն դաշտերին վրայ։ Քիչ ժամանակէն կիլիկիաի մէջ Լատիններ այնքան բազմացան որքան Հայեր և այդ ժամանակ ֆրանսական և լատինական ամենանշանաւոր գերդաստաններէն շատեր խնամակալութեան կապերով կապուեցան հայ ազնուական ընտանիքների հետ։ Եւրոպաի ծովեզերեայ և առեւտրական բոլոր պղպեղի վաճառականներն ալ լեցուեցան այնտեղ։ Աբեւելքի ամենաթանկագին վաճառքների առեւտուրը որոց մեծերանցներն և արտահանութեան կեդրոններն էին կիլիկիաի նաւահանգիստները, միրենք քաշած բերած էր հան կարելի է աչքէ անցունել ասոր վերաբերեալ այն արտօնութիւնները որ մենք տուած ենք ձենովացի, Վենետիկցի, Բիսացի, Սիցիլիացի, Բրովանսցի և Մոնբելիէի վաճառականներին։ Ագռնց դաշնագիրներ դեռ պահուած կը կեանան ձենովաի, Մէսինաի և Մոնբելիէի դիւանատուներին մէջ։

Մեր այս դիրք պատճառ եղաւ որ Լատիններն բոլոր թշնամիների առաջնութիւնը մեր վրայ հրաւիրենք։ Սոքա այնպէս կը համարէին թէ մեզ պէտք էր զոհել Արեւմտեաններէն իրենց վրէժ առնելու համար. այնպէս որ երբ Եւրոպացի իշխաններն յետ կեցան իրենց հետաւոր արշաւանքներէ, մենք միայնակ մնացինք մեզ նէ քանի անգամ ուզած զօրաւոր մի թշնամու առջև։ Լևոն Զ մի քանի անգամ դիմադրեց Եգիպտացիներին և իրօք իր դաշնակիցների օգնութիւնը լինդրելէ յետոյ, Սիսի ամրոցին մէջ ճարահատած անձնատուր եղաւ անպայման (1375), ինն ամիս պաշարուած մնալէ յետոյ։ Եւ սկսաւ այսպէս կործանեցաւ Արմենիաի թագաւորութիւնը։ Լևոն գերի տարուեցաւ Գահիրէ ուր վեց տարի բանտարկուած մնալէ յետոյ, Քաթիլլի վեհանձն Թագաւորին միջնորդութեամբը ձեռք բերաւ իր ազատութիւն։ Լևոն ուզեց երթալ Հռոմ և Սպանիա շնորհակալութիւն յայտնելու համար իր բարերարին։ Անկէ անցաւ Ֆրանսա և Շարլը Զ Թագաւորի բարեկամական օգնութիւնը խնդրեց իր երկիրներ վերստին ձեռք բերելու համար։ Ֆրանսաի Թագաւորը ընդունեց զինք իր տատիճանին վայել պատիւներով և միանգամայն խոստացաւ իրեն որ Անգլիոյ հետ պատերազմը վերջացածին պէս պիտի օգնէ իրեն վերստանալու համար իր Թագաւորութիւն։ Շարլ Զ իրեն աջակցութեան տակ դրաւ և Սէն-Տրնի (Օէն) Սէն-Թեմիմաանի պալատը և առատ ռոճիկ կապեց։ Լևոն իր երախտագիտութիւն յայտնելու համար Ֆրանսաի Թագաւորին առաջարկեց իր միջնորդութիւն Անգլիոյ Բիչարդ Թագաւորին քով։ Միջնորդութիւնը ընդունուելով գնաց Լոնտոն փառաւորապէս ուղեկիցներով մեկաեց։ Անգլիացի ժողովուրդը հանդիսական ընդունելութիւն ըրաւ իրեն և Թորհրդարանը պիջմանելով նորա փառաբերի առաջ, լիազօր պատուիրակներ դրկեց Գուլօնները—սիրը—Մէր որպէս զի Ֆրանսաէ պատուիրակների հետ համաձայնուին խաղաղութեան պայմաններին վրայ։ Լևոն կը կրկնէր յաչխժամ սա խօսք. «Թէ Արեւելեան քրիստոնեայների փրկութիւնը կախուած է Ֆրանսայի եւ Անգլիայի դաշնակցութենէն։»

Դժբախտութիւն եղաւ Հայերի համար որ Բիչարդի պահանջները ալդպէս եղան այդ բանակցութիւնների յաջողութեան և Լևոնի յոյսերն ի դերև ելան։ Արմենիաի Թագաւորը մեռաւ ի Փարիզ 1393 Թուականի Նոյեմբերի 29ին։ Այդ ժամանակ նա կը բնակէր Թուրնելի պալատին մէջ որ Ֆրանսաի Թագաւորներին յատուկ բնակարանն էր։ Մարմինը սովորական շքով Թագուհեան Կեղեսաւինեանց վանքին մէջ։ յետոյ 1789ին փոխադրուեցաւ Սէն-Տրնիի աբբայնական գերեզմանատունը ուր կը հանդչի ցայսօր։ Արմենիաի վերջին Թագաւորի մահէն յետոյ որ ժառանգորդ չունէր, Արմենիաի Թագաւորութիւնը դաւորի պատուական տիտղոսը անցաւ Կիպրոսի Լուսինեանցներին և երբ յետոյ այդ ցեղն ալ վերջացաւ, անցաւ Սաւոյաի դերդաստանին ուր կը մնայ մինչև մեր օրերս։

Ուրեմն Արմենօ-Լատինական դաշնակցութիւնը պարզապէս համակրական խնդիրների վրայ չէ որ կը հիմնուի, այլ պատմական ճշմարիտ եղերութիւնների և կենսական շահերի վրայ։ Եւ թող չկարծեն թէ այս ժողովուրդ անցման կամ առանց պատմութեան մի ժողովուրդ է։ Ընդհակ որ վեց միլիոն կը հաշուուի, արեւելեան ազգութիւններին մէջ առաջին տեղը կը բռնէ և ամբողջ Ասիոյ վաճառականութիւնը իր ձեռքն է մինչև Հնդկաստան։ Իսկ Հային հայրենիքը այն երկիրներէ մին է ուր իւրաքանչիւր քայլափոխին մի նախնի փառաւոր յիշատակ կարդացնայ մարդու մտքին մէջ։ այդտեղ է որ Նոյի տապանը կեցաւ կըսեն։ այդտեղ է որ Աբրահամ գնացին վճռաւոր ասկէգերը։ այդտեղ է որ բուսաբանները կը կարծեն թէ վերստին գտնուած է բազմաթիւ տեսակ տունկերի հայրենիքը, ի միջի որոց և որ թաւուտները և ասանձները։ այդտեղէ բերաւ որկրամոն Լուսիւլլոս կեռասը. այդտեղէ կուգայ փռսիանը։ այդ երկրի լեռներէն է որ անցան Տասն Հազարները իրենց հանբաւատար նահանջի ժամանակ և վերջապէս այդտեղ է որ աշխարհագիրները ցոյց կը տան իբր կեդրոն երկրի։

Ռազմագիտական, գինուորական և վաճառականական տեսակէտով, Արմենիան կը տրուէ Միջերկրականի մամբողջ ծովեզերքին և բոլոր Ասիոյ և ցամաքի կողմէն ալ կիմանաք Սուէզի ջրանցքին և Հնդկաստանի ճանապարհին։ Միջերկրական ծովին, Կասպից ծովին և Սև ծովին վրայ ունի վաճառքների փոխադրութեան երեք մեծ կեդրոններ։ Իր ծոցի մէջ կը կրէ տասը հազար տակու, արծաթի, պղնձի և այլն։ Ունի երեք մեծ լճեր, Վանի լիճը Թիւրքիոյ Արմենիաի մէջ, Ուրմիաի լիճը Պարսկաստան Արմենիաի մէջ և Սեւանայ լիճը

Ռուսական Արմէնիայի մէջ։ Բազմաթիւ մեծ գետերը, ինչպէս Եփրատ, Տիգրիս, Արաքս, Կուր, Ճորոխ, Ալիս (Քըզըլ-Էրմագ) և այլն, իրենց ճանապարհները բացած են այնտեղ ամէն կողմեր։

Ֆրանսական հիւպատոսի վերջին տեղեկագիրներէն համեմատ, տարեկան 40էն 45 միլիոն ֆրանգի նեբածութեան վաճառքներ և 25էն 80 միլիոն ֆրանգի արտածութեան վաճառքներ կանցնին Ալեքսանդրէթէն (Խաչէնտէրուն) որ Կիպրոսի դէմը կը գտնուի։ Պարսկաստանի և Աֆխազիոյ ամբողջ վաճառականութիւնը Տրապիզոնի միջոցով կը լինի։ տարեկան 43էն 50 միլիոն ֆրանգի ներածութեան ապրանքներ կանցնին անկէ որոյմէ 17 միլիոնը Պարսկաստանի համար է և 24էն 30 միլիոնի ալ արտածութեան ապրանքներ կանգնին որոյմէ 4 միլիոնը Պարսկաստանի կը վերաբերի։ Վաճառականական մի այսպիսի կարևոր չարժում արժանի է անշուշտ ամենալուրջ ուշադրութեան Ցունաստանին և «Միջերկրականի մաքսային Միութեան» (Union douanière Méditerranéenne) կառավիչների կողմէն։ Եւ այսկերպով կը յուսանք որ Յունաստանի դաշնակցութիւնն անունը չտալով կը փոխուի և կը լինի Արմէնո-Ցունաստանի դաշնակցութիւն։

Գալով Հայերի իզձերին, ազնքամենապարզ, և միանգամայն տրամաբանական, չատ չափաւոր և այնպիսի իղձեր են որոց ամէն վեհանձն և ազատասէր ոգիներ դր նպերեն անշուշտ իրենց ազդու գործակցութիւն։ Հայեր քաղաքական անկախութիւն ձեռք բերելու հասէ չեն ինկած. նոքա մի չատ օրինաւոր բան կը խնդրեն. նոքա կուզեն ապրելու իրաւունք ունենալ որպէս դի կարենան ապահովապէս ապրիլ իրենց երկրի մէջ և ամբողջ աշխարհի վաճառականութեան առջև բանալ աշխարհի արգասաւոր տեղերէ մին որ այսօր խորտակուած է թշուառութեան և աւերման վիճակին մէջ։ Մէկ խօսքով, Հայեր կը պահանջեն և պիտի պահանջեն իրենց բոլոր ուժով և օրինական ամէն ճանապարհներով, վարչական և տեղական ինքնավարութեան իրականացումը զոր կը չնորհէ իրենց Պէրլինի դաշնագրի 61րդ յօդուածը Թիւրքական բժնեն համար որ Արմէնիոյ ամենադժբաղդ մասն է և ուր կը գտնուի անշուշտ հայ տարրի ծանրութեան կեդրոնը և հայկական ազգի խիտ բնակութիւնը։

ԺԱՆ ՊՐՈՒՍԱԼԻ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԻԱՅԷՆ

—

Թիֆլիս, 7/19 Սեպտեմբեր 1886

II

Սեպտ. 28ին պիտի կայանար Բանակագործական ընկերութեան Ընդհանուր ժողով 1883 թուի Ընկերութեան հաշուի քննութեան և վաւերացման համար։ ժողովը տեղի չունեցաւ. որովհետև ժամին ներկայ էին— նախագահը, քարտուղարը և միմիայն չորս անդամ։ Այս տխուր իրողութիւնը հաստատում է նախորդ նամակով ասածներնիս։

—«Արմէնիա»ի ընթերցողներին յայտնի է թէ՛ ազատութիւնը և թէ՛ դրութիւնը, սակայ կրկրեմ մի բարեկամիս յօդուածի ճանապարհորդութիւնը նոյն իսկ իւր խօսքերով։ «—Գրելու առիթի ունեցայ Ս. լրագրի յօդուածը պարունակում էր թէ՛ սխալ վիճակութիւններ մի հայարնակ գաւառի անտեսական դրութեան վերաբերմամբ և թէ՛ կառավարիչներ յորմէ նոյն գաւառի հայերի շիտակութեան և փող ձեռք բերելու հնարների վրայ։ Կարդալով յիշեալ յօդուածը ես դիմեցի մի հայ լրագրի խմբագրին իմանալու համար, արդեօ՞ք նա կ՛ուզի իմ պատասխանս երթէ դրելու լինեմ։

—Դա նշանաւոր լրագիր չէ. ես ինձ չեմ կարդացել այդ յօդուածը և չարժէ էլ պատասխանել այդ լրագրին։» —Եղաւ առաջին պատասխանը դիմած հայ խմբագրիս։

Ես գոհ չմնացի այդ խորհրդից. գրեցի մի պատասխան ռուսերէն լեզուով և դիմեցի նոյն Ս. ռուս լրագրի խմբագրին, խնդրելով ապերթս իմ յօդուածս իրը հերքումն յիշեալ յօդուածին։ Երեք—չորս օրից յետ խմբագիրը ինձ յայտնեց մօտաւորապէս հետևեալը։ «—Ես ձեղ չեմ ճանչնամ։ ուստի ես կատարելապէս հաստատ եմ իմ թղթակիցիս և համարձակ եմ նորա տեսութիւններին։ Ես չեմ կարող տպել ձեր յօդուածը. դորանով ես ինքս յանձն կառնեի որ իմ թղթակիցս անբարեխիղճ կերպով է կատարել իր պարտաւորութիւնը և լաւ չէ հետազօտել երկիրը։ Ձեր յօդուածից երևում է որ դուք ծանօթ էք յուզված ինդիրների հետ... դիմեցէք ուրիշ լրագրի կամ գրաքննական տեսանը որը կարող է ինձ տպել տալ ձեր յօդուածը...» Նա յետ տուեց ինձ յօդուածս որ կրում էր ճակատի վրայ. հետևեալ բացատրութիւնը (առանց որևէ խմբագրական նկատողութեան չէ կարելի նեղլիայացնել գրաքննական տեսանը)—խմբագրութիւնս չէ կարող գնահատել այս հերքումը՝ դի պարունակող փաստերը հակաճառում են տեսութեան թղթակցիս փաստերին որին խմբագրութիւնս առիթ չունի հաստատ չընծայելու»։

Ս. յանձնաժողովութեամբ զարդարուած յօդուածս, հանգերձ 1 ր. 20 կ. (al pari 5 ֆրանկ) դրոշմանիշով, ես իբրաւունք ունեի առաջարկել գրաքննական տեսանը որև տպիչել կոտր (երթէ ջնջելու բան չգտանէր յօդուածիս մէջ) տպագրել Ղ. ռուս թերթին։

Գործը սկսեց ինձ հետաքրքրել մի սիրահարական վէպի պէս. մի նոր անծանօթ աշխարհ էր այս բոլորը ինձ համար և ես վճռեցի չտրունալ կել նպատակիս հասնելու համար։

Գրաքննական տեսանը ես թողի վերջնաբանի համար և դիմեցի մի ուրիշ տեղական ռուս լրագրի։ Ահա դորա խմբագրի պատասխանը.—«Ես յանձն կառնեի տպագրելու երթէ որ վստահ լինէի թէ յօդուածի չարելը տպարդիւն չպիտի լինի. քննիչը կարող է ջնջել։ Աւելի լաւ կանէք որ դիմէք այս ինչ լրագրին որը աւելի կշիռ ունի»...

Ես յայտնեցի չնորհակալութիւնս այս խորհրդին ևս. փորձեցի օգտուել։ Այդ երրորդ ռուս լրագրի խմբագիրը քաղաքից բացակայ էր— Ինչո՞ւ չէք կարող դուք վճռել, հարցրի ես օգնականին։—«Մեր լրագրին արգելուած է բանակուռի մէջ մանել Կ. լրագրի հետ որը կիսապաշտօնական է և որը նաև ներքին օժանդակութիւն է ստանում կառավարութիւնից»։ 3—4 օրից յետ այս չորրորդ խմբագիրն էլ յայտնեց յօդուածիս անյարմարութիւնը իւր համար։

Ընկերներիս միտը լսելով ինձանից յօդուածիս արկածները, յանձն առաւ տպագրելու յայտնելով մի ուրիշ հայ լրագրում որի խմբագրի հետ ինքը լաւ ծանօթ էր։ Ես չընդդիմացայ քանի որ ռուսերէն պիտի տպուէր։

Ես յանձնեցի երան և միւս օրը պատասխան ստացայ թէ «Ցոյս կայ»։

2 օրից յետ նա ինձ ասաց. խմբագիրը տուել է շարելու, ուրեմն վաղը լոյս կը տեսնի։

Յաջորդ օրը ոչինչ կար տպուած և մենք Ցունկը զարմացած։ երկու օր ևս անցան։ Ընկերիս և իմ համբերութիւնը հատնում է. նա գնում է խմբագրատուն. խմբագիրը բացակայ է լինում, իսկ օգնականը կրկնում է թէ տուել ենք շարելու։ Անդոհ՝ ընկերս գնում է տպարան և գրաշարներին դիմում.—ի՞նչ եղաւ այն ռուսերէն յօդուածը։

—«Ձենք շարելու. ռուսերէն է գրուած, գրաքննիչը անպատճառ քաշելու է վրան կարմիր խաչը և մենք մեր պայմանի համաձայն ստիպուած կլինենք նորից 2 ամբողջ սիւնակ չարել»։ Նա նորից դիմում է խմբագրին բացատրութիւն պահանջելով։ —«Միամիտ եղէք. ես սարքել եմ երթէ վաղը չերեւ միւս օրը իսկ կայ ու կայ»։ Վերջապէս 2 օրից յետ դժբաղդ յօդուածս ապատուն գուաւ լրագրի 4րդ երեսի վրայ յօդուածների առաջ։ Ընկերիս ամբողջ պատմութեան ժամանակը ես ծիծաղից մեռնում էի.—Այո՛, ծիծաղելի է, երթէ տխրալի ևս չլինէր. մի ամբողջ ամիս սրան ու նրան դիմել մի լոկ փաստեր պարունակող հերքում հրատարակել տալու համար»։

Ֆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԱԽԱԿՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

—

Ս. յս միութիւն որի կանոնադիրը հրատարակուած է «Արմէնիա»ի 20րդ թուով և որի նպատակն է օժանդակել Հայաստանի ժողովրդի նիւթական, բարոյական և մտաւորական զարգացմանը, մինչև այժմ ունեցած է դեռ 11 հիմնադիր անդամ հետևեալ տեղերն. 6 Թրանսա, 4 Րումանիա և 1 Պուլկարիա։ Ինչպէս կը յիշեն մեր ընթերցողները, Միութիւնը այն ժամանակ միայն պիտի կըրնայ կազմակերպուիլ բան կանոնագրին, երբ հիմնադիր անդամներուն թիւը հասնի 50ի։

Ցոյս ունինք թէ նոքա որոնք անտարբեր չեն իրենց հայրենիքի բարեկեցութեան գործին և չեն բաւականանար միայն պատահական թիւններով, պիտի փութան յարիլ շուտով այս Միութեան որպէս զի Միութիւնը ժամ յառաջ իւր վարչական կազմութիւն և գործունէութիւն ստանայ։

Փութանք աւելցունել նաև թէ այս Միութեան նպատակը այնպիսի սկըզբունքներէ վրայ հիմնուած է, որ խելքը գլուխը և իւրաքանչիւր անկեղծօրէն սիրող ոչ մէկ Հայ չկրնայ հակառակիլ անոր, ինչ գոյնի կամ կուսակցութեան ալ վերաբերի ուրիշ խնդիրների մէջ։ Հետևապէս զանազան կողմեր ցըրուած և զանազան միջավայրներէ ազդեցութեան տակ գտնուող Հայաստանի հարազատ զաւակները կը հրաւիրուին ամփոփուիլ այս Միութեան մէջ և համերաշխութեամբ օգնել, որչափ որ կարելի է, նիւթական, բարոյական և մտաւորական զարգացմանն այն խեղճ ժողովրդի որ մեր հայրենի երկրի մինչև այժմ պահպանած ճնացած լինելով, զրկուած է յառաջդիմութեան բաղմատեսակ դիւրութիւններէ։

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

—

Վ.Ն.ԵՆ Հոկտ. 6/18ին գրուած մի նամակէ կը քաղենք հետևեալ տխուր լուրերն։

«Երկրիս վիճակը յոյժ տխուր է. Քուրդերը մի կողմանէ, արքունի դիւնաւորներ միւս կողմանէ, արձակ հալածանք հարատահարում են անպաշտպան Հային։ Այս անցեալ 30 օրուայ ընթացքում միայն, ասպատվերի ուճիրներ գործուեցան. 1. Աբջունից Վանի գիւղէն քուրդեր երկու հայ կտաւեր առևանգելով բանի թրքացուցին այժմ քաղաքս բերած են, բայց փոխանակ Առաջնորդարանին յանձնուելու, մօլլային տունը բնակեցուցած են։ 2. Դարձեալ Ասպինակայ հայ գեղատի հարս մը փախցուցին Քուրդեր որ անոյշ է ցարդ։ 3. Քաղաքիս մէջ արքունի զօրաց սպայ մը առաւօտեան կանուխ Պօդոս-Պետրոսի թաղէն մի օրիորդ առևանգեց մինչդեռ ան փողանի դըրան առաջը քար ծաղրուածքեան կաղլէր։ չարաչար բռնաբարուած յանձնուեցաւ Առաջնորդարան և մեր ջոջ ազայք բաղաք անգամ չբարձան։ 4. Դարձեալ քաղաքիս մէջ թուրք սրիկայ մի հայ կին առևանգելով բըռ-

նի Թրքացուցին 5. Աբդունի զինուորք Նոր Գիւզամ գիւղացւոց վըրայ յարձակելով 4 մարդ մահացու վիրաւորեցին։ 6. Կրաւվի Մէհմէտ ագան և Կէօրէնտաշցի Շէյխ Նուրին՝ Շատախու Ծեծանց գիւղի Մելիք Մխիթարը չարաչար սպաննեցին։ Իսկ ոչխար տանել՝ անցող գարձողները թալնել՝ սովորական և առօրեայ պատահմունքներ են։

«Ռուսաց և Անգլիոյ հիւպատոսները համիամատ ծանուցագրով մը վաչիին բողոքեցին սրդի վիճակի տարապայման գէշ լինելուն մասին. բայց թիւրքերը առաւել ևս կատղեցան և պաշտօնական անձինք սրդէն քաշուիցս մի ընդհանուր չարդ անելու սպառնալիքները արին Հայոց հրապարակաւ։»

—ՀՈԼԼԷՊԷՆ (Բերլին) սեպտ. 17/29ին գրուած մի նամակէ կը քաղենք հետեւեալ տողերն։

«Վանի ռուսական նախկին Դեր-Հիւպատոս Վսեմ. Կամսարական Պէկ որ այժմ նոյն պաշտօնով Համա կը գտնուի, թուէս 2 օր առաջ քաղաքս եկաւ Հիւպատոսին հետ առնուելու։ Քանի մը օրէն պիտի մեկնի։ Նորին Վսեմութիւն յառաջիկայ կիրակի օր եկեղեցի իջնելու փափաքն յայտնեց։ Արդէն իւր բարեսիրական և ռանդը ամեն Հայու քաջածանօթ ըլլալով չատեր կը բաղձան իրեն առնութեան արժանանալ։ Երանի թէ Հայ ազգը այսպիսի առաքինութիւն և ազգասէր Հայեր չատ ունենար իր մէջ։»

ՄԱՀՈՑԱԺ

Դահիրէէն մեզ կիմացուն նաև թ պիրա որ Մեծ. Գ. Թուման Ոֆ, Խառն դատարանի նախագահ առնի դործադիր պաշտօնեայ և Դահիրէէնակ Հայերի Ցառաջդիմասէր ընկերութեան հանգուցեալ անդամներէ մին, իւր մահկանացու ընթացք կնքելէ չատ կարճ հիւանդութենէ յետոյ։ Ցուղարկաւորութեան սքեսր հանդէսը կատարուեր է հինգ. 29ի ուրբաթ օր ուր ներկայ գտնուեր են Ցառաջդիմասէր ընկերութեան անդամներէն զատ, նաև Կառավարութեան պաշտօնատարներ և պատուաւոր օտարազգիներ։

Պ. Թուման Ոֆի ընկերակիցներէ մէկին, Մեծ. Գրն. Կարապետ Լազեանի, այդ առիթով գրած Ֆրանսերէն դամբանականի մի օրինակը խմբագրութեան ձեռք հասած լինելով, նորա թարգմանութիւնն կը հրատարակենք առաջիկայ թուով, ցոյց տալու համար Դահիրէի Ցառաջդիմասէր ընկերութեան մեր վչտակցութեան զգացումները իւր առանգատ մէկ անդամի տարաժամ մահուան համար։

Առ այժմ կը վերջանք յայտնել մեր ցաւակցութիւն և մաղթել միխիթարութիւն Գրն. Թումանոֆի ընտանիքին և իւր երիտասարդ այրիին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Լոնտոնէն կը հեռագրեն նոյ. 7ին թէ կառավարութիւնը որոշեր է մի յիշատակագիր դրկել մեծ պետութիւններին, եգիպտական խնդրին նկատմամբ։

—Թիրնօվայէն կիմացուննեն թէ Գուլիար խնամակալներն և նախարարներն նոյ. 4ին մի ժողով անելով որոշեր են պատգամաւորութիւններ դրկել Պէրլինի դաշնագիրն ստորագրող մեծ պետութիւններին և աղաչել որ համաձայնուին Գուլկարիային մի նոր իշխան ընտրելու համար։ Վալտեմար Իշխանը պատահանած է խնամակալութեան հեռագրին թէ չընդունիր ընտրելիութիւնը։

—Գուլկար Սոպրանիէն իւր քուէով խառն դատապարտեր է ընտրութիւններն ժամանակ Տուպնիձայի մէջ եղած սպանութիւնների հեղինակները և որոշեր է որ սպանուածների այրիներին և որբերին մի թոշակ յատկացուի Կառավարութենէն։

—Պետերբուրգէն մի հեռագիր կիմացունէ թէ Մինիրէլիսի Նիքոլա իշխանը Ռուսիոյ հաւանական ընտրելին է Գուլկարիոյ գահին համար։

—Ֆրանսական դեսպան Մօնթոլոն կոմսը առևտրական մի դաշնագիր կնքեր է Ցունաստանի կառավարութեան հետ։ Այդ դաշնագրով Ֆրանսան ամենէն ազեալի նպաստաւորեալ ազգի պայմաններն ձեռք բերած է այնպէս որ Ֆրանսական չատ ապրանքներու վրայ %ին 50 զեղչ պիտի լինի։ Ֆրանսան ալ իւր կողմէ պարտաւորութիւն ստանձնած է մաքսատուրքեր չաւելցնել Կորնթոսի չամիչներին վրայ։

—Պուատա-Բէչթաէն կը հեռագրեն նոյ. 6ին թէ Ազստրիոյ կայսր և Հունգարիոյ թագաւոր Ֆրանց Յոզէֆ, Պատգամաւորութեան նստի հանդիսաւոր բացմանն առիթով իւսած ճառին մէջ հետեւեալները ըսած է նաև. «Իմ կառավարութիւն ուշադրութիւն նուիրած է այս բոպէիս Գուլկարական տագնապի ընթացքին և կը ջանայ որ այնպէս լուծում այդ խնդիր որ համաձայն լինի Գուլկարների իղձերին, Եւրոպայի չահերին և գոյութիւն ունեցող դաշնագիրներուն։ Բոլոր պետութիւններուն հետ մեր ունեցած լաւ յարաբերութիւնները և ամեն կառավարութիւններէ ալ իրենց խաղաղասիրական միտումների վրայ մեզ տրուած ապահովութիւնները կը յուսադրեն որ, Արևելքի մէջ տիրող արդի դժար կացութեան հակառակ, Եւրոպայի խաղաղութիւնը չպիտի խանգարուի, պահպանուելով միանգամայն Աւստրօ-Հունգարիայի չահերն։»

—Կ. Պօլսէն կը հեռագրեն նոյ. 6ին թէ անգլիական դեսպան Սըր Ռոպերթ բոլոր չանքերն Սալիսպանը հեռացունելու համար ռուսական դաշնակցութենէն, անյաջող եղան։

—Պուլկարի մէջ մի դաւադրութիւն եբևան եղած է։ Դաւադիրները որոշ գըլուխը կը գտնուին մի ռուս նախկին սպայ որ Մօնթէնէկրօցիներ զինուորագրած էր և մի քահանայ որ մի քանի ամիս առաջ Պուլկարի մէջ Ալեքսանդր իշխանին դէմ նիւթուած մի դաւադրութեան մէջ մատուներած էր արդէն, Պուլկարի պահապան զօրքերի մէկ մասին օգնութեամբը ձերբակալեր են զօրքերի հրամատարը և երեք սպայներ։ Հրամատարը յաջողեր է փախչիլ, իւր հետ տանելով մի խումբ զօրքեր բայց քաղաքը յեղափոխականներին ձեռքը թողլով։ Նոյ. 7ին եկած հեռագիրը կիմացունէ թէ Պուլկար կառավարութիւնը երկու խումբ զօրքեր ղրկեր է որոնք առանց գիմադրութեան մտեր են Պուլկար։ Յեղափոխութեան դլխաւոր քահանան (քօր) և սպայները փախեր են։ Մօնթէնէկրօցիները ձերբակալուեր են։ Ռուսիոնհեղութիւն չէ պատահած։

—Ֆիլիպէէն կիմացունեն թէ ժողովուրդը չատ յուզուած է այնտեղ։ Ջինուած հրոսակախումբեր կապրօրօշենդալով փորձեր են ոտք հանել մերձակայ գիւղացիներն Ֆիլիպէի կառավարութեան դէմ։ Փորձը անյաջող եղած և պաշարման վիճակ հրատարակուած է այժմ ամբողջ Րումելիի մէջ։

—Պերլինէն կը հեռագրեն թէ Իշխան Գիսմարք կը վերադառնայ Պերլին, Արևելքի մէջ գործերի դրութիւնը ծանր կերպարանք առած լինելուն համար։

—Թիրնօվայէն կիմացունեն որ Սօպրանիէն Խնամակալութեան պատգամաւորին առած պատասխանին մէջ գոհունակութիւն յայտնած է Խնամակալութեան անձնուէր և խաղաղասէր ընթացքին համար և վստահութիւն յոյց տուած է թէ նոյն կերպով պիտի չարունակէ մինչև որ ժողովրդի ընտրելին բարձրանայ Իշխանական գահին վրայ։

—Պերլինէն կիմացունեն թէ Ֆերտինանդ Հօհենցօլէրն Իշխանը որ Պուքրէշ գնացած է, մերձաւորագոյն ժամանգորդն լինելով իւր քեռուն, Րումանիոյ Կարոլոս Թագաւորին որ տղայ չունի, հինգ չաբաթի չափ պիտի մնայ Բուամնիա։ Այդ միջոցին, Կարոլոս Թագաւորը հանդիսաւոր կերպով իրեն գահի ժառանգորդ պիտի հրատարակէ զայն։ Իշխան Ֆերտինանդ ծնած է 1865ին և դեռ տղայ է։

—Պուլկար Սոպրանիէն այսօր թագած է իշխանի ընտրութիւնը։ Մեծ պետութիւնները որոնց դիմած էր կառավարութիւնը իշխանի ընտրութեան համար, դեռ չեն պատասխանած։

Կենիգրատի որ Սոպրանիէն ընտրէ վաչէմար իշխանը, թէև նորա ընդունելուն համար չատ յոյս չկայ։

—Կիրակի օր մի թնդանօթաձիգ նաւ վառնայէն գնացած է Պուլկար որ ժողովուրդը չատ գրգռուած միտքի մէջ է։ Կերևի որ Րումելիի մէջ մի յեղափոխութիւն ծագելու երևելի կայ։

—Սիմնատրա լրագրին գրած են Թիրնօվայէն թէ մի ռուսական նաւ 300 Մօնթէնէկրօցի հաներ է Պուլկարի չրջակայները։

—Գ. Կատրսթէն պատասխանելով Պուլկար երեսփոխանների ուղերձին, կըսէ թէ՝ Թիւրքիոյ ազատագրուած հպատակներուն համար իւր կարծիքները նոյն են ինչ որ էին յառաջ և վստահ է որ Անգլիոյ մէջ այժմ ամենքն ալ համակարծիք են այս մասին։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՅ. 2ԷՆ 9

ՆԵՐԱՔՈՒՓԻՆ

ԲՈՒՐԴ. Շաբաթուս վաճառումները 1000 հակի կը հասնին, որոյմէ կը նչանակեմք, 170 հակ առաջին կըտրում կիւրճիւ կէս լուացուած 115 և չը լուացուածը 95 ֆր. 170 հակ Էնգարէ լուացուածը 200 և չը լուացուածը 130 ֆր. 15 հակ Պաղտատի ճերմակ 190 ֆր. 300 հակ Հալէպի լուացուած տարեպաք տեսակէն 147½ ֆր. և 50 հակ Հալէպի լուացուած 220 ֆր. 100 քիլօն։ Սակայն մի քանի օր է փորը թուլութիւն մը եբեկիլ սկսած է և գիները մաս մը կոտրելու տրամադիր կերևին։

ԲԱՄՊԱԿ. Անգործ և անչարժ դըրութեան մէջ է։

ՄԵՏԱՔՍԵԼԷՆ. Գործերը անպակաս են, չաբաթուս վաճառումներէն կը նչանակեմք 40 հակ զանազան մետաքսներ, 1200 քիլօ Նուխայի կոկոն 8¾–9 ֆր. 1400 չիլօ Փութայիս 8 ֆր, 3500 քիլօ ծակուած կոկոններ 6¾–7¾ ֆր. 4000 քիլօ Քրիզնէ 1, 30–2, 80 ֆր. 1200 քիլօ Նուխիի թանվալ 4, 80 ֆր. 4500 քիլօ Նուխիի չխար և 12000 քիլօ զանազան Քրիզնններ զանազան գներով։

ԿԱՆԵՓ. Բաւական պահանջ կայ, ըստ տեսակին 64–68 ֆր. 100 ք։

ՑՈՐԵՆ. Ս.Քրիքայիէ Ռուսիոյ հունձքերուն պակասութեան պատճառաւ գիները յանկարծ բարձրացան, մանաւանդ կարծր տեսակները չատ կը վնտռուի, ըստ տեսակին 16էն 22 ֆր. 100 քիլօն։

ՎԱՐՍԱԿ (avoine). 11–13½ ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). 11¾–12 ֆր. 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ. Տրապիզոնի մաքրուած տեսակները 25–25½ ֆր. և Ռումանիոյ ապրանքները 14–14½ ֆր. 100 քիլօն։ Հրապարակը անջօր է։

ԹՈՋՆԱԿԵՐ (alpiste). 26–27 ֆր.է առնողներ կան, բայց վաճառողները աւելի կը բռնեն։

ՇՈՒՇՄԱ (sésames). Աւելի թոյլ է, 39 ֆր. 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ (pavots). 27–27½ ֆր. 100 քիլօն։

ԿՏԱԻԱՀԱՏ. 26 ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ. Զը կոտրածը 38½ և կոտրածը 99–100 ֆր. 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՏ. 120–150 ֆր. 100 քիլօն։

ՍՓՅՏԻ ՄՈՐԹ. 28–35 ֆր. տուլինան։

ԱՐՏԱՔՈՒՓԻՆ

ՇՈՒՔԱՐ. 2 քիլանոցը և 3 քիլանոցը 42 ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ. Րիօի ապրանքները 61–73 ֆր. 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ. 3, 25–3, 80 ֆր. քիլօն։

ՊՂՊՂ. Ըստ տեսակին 92–96 ֆր. 50 քիլօն։

Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիզի հայ. գրբ. հրատարկ. ընկերքե.»

Մեծանուն բանաստեղծ Գամառ–Քաթիպան (Ն. Գաւրականեանց) ուսուցնաւոյները պարունակող մի դիւք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը գրուած է հեղինակին պատկերը։ Գամառ–Քաթիպայի բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներին, ա. ւելորդ կը համարինք գրել այդ մասին։

Կը ծախուի «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը ի գին 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղ համար 2 ֆրանգ փոստի ծախքովը հանդերձ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՄՐ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ » 40 »

Կը ծախուին Փարսէյլ, «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը։

Ուրիշ քաղաքացիներից կը դրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներուն ֆրանսական, բրբական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Ազմէնիա»ի խմբագրութեան։

ՍԱՐԳԻՍ Գ. ՀԱԼԱՃԵԱՆ

ՑԱՆՑԱՆԱՏԱՐ Ի ՄԱՐՍԷՅԼ

ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐԱՔԻՆ
ԱԳՐԱՆԱՑ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ

Ն Ո Ւ Յ Ն

ՀԱՑԻ ՄՈՒԱՑՈՒԱԾ ԴԱՏԸ ԳԱՇՏՊԱՆՈՂՆԵՐԻՆ

Հայաստանի վիճակին նկատմամբ արտասուչ մաղթանքներ և մտածումներ պարունակող մի տետրակ է։

Հայաստանի բնակիչներէն Գ. Խաչատուր գրած այդ հայրենասիրական Սաղմոս կը ծախուի «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը։ Գինն 40 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։

Մի քանակը հայ կը ցանկայ ունենալ Բաֆֆիի «Դաւիթ Բէկ»ի Ա. հատորը և Խ. Աբովեանցի «Վէրք Հայաստանի»ն։ Կը խնդրուի որ ունեցողը խնայանէ խմբագրութեան թէ ինչ գնով կը համաձայնուի տալ։ Լաւ վճարում կը խոստացուի։

—

Ազգային երաժշտագէտ Աբժանդիշատակ Թաշճեան Նիկողոսի ազատերաններէն մէկը որ լաւ ձայնագրութեան դիւտութեամբը եկեղեցական երգեցողութեան քոչ տեղեակ ըլլալուն վատերական վկայականներ տալ ունի, կը փափաքի աղգային եկեղեցական և դպրոցի մէկուն մէջ պաշտօնավարել։ Ուզողը կրնայ դիմել խմբագրութեան, անոր հետ բանակցութեան մտնելու համար։

LA TRIBUNE DES PEUPLES

Ինչպէս կը տեսնուի լրագրիս գլուխը դրուած ծանուցումէն, Tribune des Peuples ընկերվարական ամսաթերթի յուլիս—օգոստոսի թիւը հայերի նկատմամբ համակրական յօդուածները կը պարունակէ։ «Ազմէնիա»ի խմբագրութիւնը բաւական քանակութեամբ ստացած է այդ թիւէ, ընկերու համար իւր բաժնորդներէ յանկացողներին։ Մէկ օրինակը կը արուի 25 սանթիմի Մարսէյլի մէջ. ուրիշ ամեն տեղերի համար 30 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։

ՎԻՃԱԿԱԳՐԱՆՈՒԹԻՒՆ

ՋԱՆԱՋԱՆ ԸՆԾԻՐ ԳՐԵԱՆՑ

Բուռճուգի Ներսէսեան ընկերութիւնը 1300 թիւ վիճակահանութեան տոմսեր չրջառերութեան հանած է որոյմէ 600ը պիտի չահին զանազան ընտիր դիւքերը որոց անուանները նշանակուած են տոմսերուն վրայ։ Վիճակահանութիւնն պիտի կատարուի հոկտեմբեր 5/17ին, վերոյիշեալ ընկերութեան դրասենեակը։ Տոմսակները կը ծախուին 6 ղուշի։ Ուզողը կրնայ «Ազմէնիա»ի խմբագրատունէն ալ առնալ վճարելով 1 ֆրանգ և 50 սանթիմ։

ԲԱՖՖԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՑԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա

Ազգային վիպագիր Գրն. Բաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը դրաւուն ԿԱՑԾԵՐԸ։ Այս դիւք կը ծանօթացնէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գիւղական տեղերին հետ, հետաքրքրաշարժ առանձնայն դէպքերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով թէ իբր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ իբր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գնուի այս դիւք ամեն հայրենասէր Հայի տունը։

* * *

ՋԱԼԱԼԷԴԻՆ

1877ի ռուս–թիւրքական պատերազմի ժամանակ Շեյխ Ջալալէդդինի ապշաւանքին պատճառով Տաճկաստանի հայերի կրած աղէտներուն մէկ աղէխարշ նկարագիրն է։ Գրքին սկիզբը կայ հեղինակին, Գ. Բաֆֆիի պատկերը։

* * *

Վերոյիշեալ երկու դիւքերը կը ծախուին «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը. կազմերը Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ. Մարսէյլէ դուրս ամեն տեղ համար փոստի ծախքովը հանդերձ՝ ԿԱՑԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 ֆր. և 30 սանթիմ։

Վ Ա Ն Գ Ո Ց

1876 թուի դեկտեմբերին թիւրք զօրքերը կրակ ձգելին և վառելին Վանի չուկային գիշեր ժամանակ նախապէս պատրաստուած մի դառապարտութիւն էր այդ, զորոյ հայերը յետին աստիճան խեղճութեան մատնելու նպատակով Հրդեհին ժամանակ զօրքերն և այն թիւրք երեւելիներն ապառաւորներն որոնք խորհրդակից եղած էին այս գործի, անմիջապէս խուժեցին, կողոպտեցին հայերի խանութները և մինչև ալ սոքա Ա յգեստանէն (ուր կը բնակի հայերի մեծամասնութիւնը) դիւրաբար խնայան և քաղաք վազեցին, գրեթէ ամեն ինչ լքեցած էր։ Տակաւին յայսօր բաղմաթիւ է այդ հրդեհի զոհ եղող հարուստ հայերի թիւը որոնք անկանդնելի կերպով կոծանուած կը մնան։

Ա յդ ժամանակ Խրիմեան Սրբազան Հայրիկը «Վանգոյժ» անուն մի տետրակ հրատարակեց որով մխիթարական խօսքեր և հայրական խրատներ կուղղէր Վանցի հայերին և կը բացատրէր թիւրքերին ալ թէ սխալ է իրենց բռնած քաղաքականութիւն և թէ հայերին վնասելով բուն իսկ իրենց չահերի վնասած կը լինին։ Թիւրք կառավարութիւնն արգիլեց «Վանգոյժ»ի վաճառումը. բայց նպատ Բ տպագրութիւնն եղաւ Տիվլիսի մէջ ուր մասուն ազատ էր այն ժամանակ։ Շատերէ վախեալ յայտնուած լինելով միշ այժմ անհնար այդ տետրակ, կը փափաքինք ծանուցանել որ կարող են առանալ «Ազմէնիա»է խմբագրատունէն, գրկելով միայն 70 սանթիմի խմբագրութիւնը կը վճարէ փոստի ծախքը գրկելու համար։

BIBLIOGRAPHIE
LA
TRIBUNE DES PEUPLES

REVUE INTERNATIONALE DU MOUVEMENT SOCIAL

Dans les cinq parties du monde

Rédaction et administration *Librairie des deux mondes* Paris, 17, rue de Loos.

Abonnement France : Un An 5 francs Union postale 6 francs.

Sommaire du N° 6 Septembre-Octobre

La Révolution dans les Beaux-Arts CASSIUS. — La situation politique et économique dans la République Argentine. TH.. — La Crémation Électrique, D' ROSELLI. — L'organisation des Fénians. — Les affaires d'Arménie, UN ARMÉNIEN. — Le Code industriel en Russie GOLOVINE. — MOUVEMENT SOCIAL INTERNATIONAL EUROPE Grèce, AFRIQUE Madagascar, Sénégal, Maroc, AMÉRIQUE DU NORD Canada, États-Unis, Guatemala, Nicaragua, Mexique, San Savaldor, AMÉRIQUE DU SUD, Pérou, Bolivie, OCÉANIE, Australie.

REVUE BIBLIOGRAPHIQUE INTERNATIONALE

Livres, Journaux, Revues,

Un numéro de cette revue est envoyé à TITRE D'ESSAI *gratis et franco* à tous ceux de nos lecteurs qui en feront la demande à la LIBRAIRIE DES DRUX-MONDES Paris 17, rue de Loos, avec le BULLETIN donnant l'ANALYSE, des publications en vente à cette librairie.

On s'abonne sans frais dans tous les bureaux de poste.

A. H. CREET & C^ie

COWNPORE N. W. P. INDES ANGLAISES

Négociants-Importateurs, Exportateurs, Commissionaires, Commissaires priseurs, Contractants (Fournisseurs) et fabricants de cuirs de toute qualité.

Ayant eu une très longue expérience dans les diverses branches sus–nommées, nous sommes prêts à recevoir des marchandises à la commission pour la vente tractative ou aux enchères publiques; dans des conditions qui seront trouvées réciproquement avantageuses et satisfaisantes.

En échange des marchandises Européennes nous pouvons fournir des marchandises fabriquées aux Indes, n'importe quelle quantité, des premiers choix comme suit :

Des jouets d'enfants de Lucknow, articles de laiton et des draps d'or de Benarès, dinanderies de Moradalad, bijouteries d'or et d'argent de Delhi, châles, étoffes de Cachemire, etc.

Ayant des locaux spacieux pour l'étalage des marchandises en commission et pour la vente aux enchères, nous pouvons en toute confiance recommander notre maison à quiconque voudra entrer en relations d'affaires avec nous, et nous serons bien aises de recevoir des communications et des échantillons dans ce but.

Références

BANK OF BENGAL ;

ROHILCNUD ET KUMAON BANK ;

AGRA BANK LIMITED.

Si c'est nécessaire, nous serons heureux de fournir d'autres références.

Toute communication doit être adressée à nous directement en anglais très détaillée, avec conditions et conventions y relatives.

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՒ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.